

## ՏՆԱՆԿԻ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Պետին գիւղի աղքատներից մինն էր. ինքն էլ համոզուել  
էր որ այդպէս է, որովհետև Աստծու իրան օրը աշխատելով  
չարչարւում էր, որ աղքատների շարքից դուրս պրծնի, չէր  
լինում, տարուայ վերջը մէկէլ տեսնում էր տաշտը դարդակ:  
Դիւղամէջում մշակութեան հր տեսակն ասես անում էր, որ  
գոնէ զաւակների ցամաք հացը անպակաս լինի, չէր յաջողուում:  
Վերջը զգիր էլ դառաւ, փայտը ձեռին թաղի ջներին բաւական  
հաշացրեց, դարձեալ մնաց խեղճ, խախալի գլուխը բան  
չընկաւ:

Պետուն ասում էին «արդարասէր», և դա անաղի համար  
չէր. նրա սիրուը սիրուն փափակներով լիքն էր, բայց որովհե-  
տե նաշարը ոչ հող ունէր և ոչ փող, գիւղամէջում թէկուզ  
նրա խօսքը, թէկուզ իմերէթու արասին: Երեխէր շատ  
ունէր. Աստծու այդ օրհնութիւնը դառել էր նրա զլիսին  
պատիժ. իրար ետնից մեծանում էին, ոչ հազցնելու հնար  
ունէր, ոչ կերակըելու, ախ... ոչ կարդացնել տալու: Մինչև  
վիզը պարագում թաղուած էր. ումնից մի ձու էր փոխ կալել,  
դառել էին ճուտեր թխուկաններ: Պարտքատէրերը բաղէի պէս  
գըլսով պտոյտ պտոյտ էին անում ու ամեն բոպէ մի բան  
պոկում: Ով առաւտանց շուտ տեսնում էր, Պետին նրա մշակն  
էր. ինչի ասես բանացնում էին իրանց փողի շահում: Այդքան  
ցաւ ու կրակ կար մէջքին բարձած, խեղճը սիրտ չունէր թէ  
գլուխը քորի:

Միառաւու երբ երեսով ջուր էր տուել և փէշով սրբում էր,  
հառաչելով կնկանն ասեց:

—Եղու, այս ինչ գէշ աստղի տակ եմ ծնուել. ողջ տարին  
միալար աշխատում եմ, պարտքի շահը չի լրանում: Պարտքա-  
տէրերիս ձեռից ուր փախչեմ. հոգէառ հրեշտակի պէս թիկուն-  
քէս պոկ չեն գալիս:

—Այս մարդ, թէ իմ խորհուրդն ես հարցնում, եկ ճամբէդ փո-  
խի. արդարութեան ու խեղճի ետնից վազելդ երեխանցս առնը քան-

դեց. արդարասէր մարդի բան չի այս աշխարհում ապրելը։  
— Ճշմարիտ ես ասում. Եղա, աբուռով լինելը ինձ այս  
օրն է զցել. ինչնու ես էլ ուրիշների պէս երես պոկող, անամօթ  
չեմ... ախ, թէ ձեռիս իրաւոնք կլինի՞, ես գիտեմ թէ մեր  
զիւղը ինչպէս կը բարեկարգեմ. Անիրաւ հարուստների քթին  
կը խփեմ, որ վաս ճանապարհը փոխեն, չքաւոր անմեղ մարդ-  
կանց հանգիստ թողեն, Նրանց ստիպելով ժամի կողքին մի  
ուսումնաբան բաց կանեմ, որ գիւղի երեխանց շարքում իմոն-  
քըն էլ կարդան, աշխարհից բան հասկանան։

— ԱՇ մարդ, միամիտ խօսելով թող. այդ տեսակ բաներ  
երազում կտեսնես, բայց այս իրական աշխարհում. ամենաին  
ոչ Լսիր, այսօրուայ ցաւը քաշենք. տաշտը գարդակ է. երե-  
խէս հրէս կը զարթնեն, հաց կուզին։ Քանի որ պարտքատէրի  
երես չես տեսել, շտապիր գնա ջաղացների ձորը, երկու խան  
ալիւր փոխ ուզիր, բեր, էլի Աստուած չարչարուողին է պար-  
տական, պարապ խօսելով տաշտը հաց չի մտնիր։

— Լաւ ես ասում, Եղա, քանի վաղ է, գնամ, ասեց Պետին  
ու ծոծրակը քորելով լոիկ ոտները փոխեց. վախեց ուղիղ ճա-  
նապարհը թողած պատերի տակի կածանով շտապեց դէպի ձո-  
րը. որտեղից ջաղացի աղմուկն ու չմկոցը լսում էր։ Ջաղա-  
ցին չմօտեցած երկիւղը Պետու սիրտը պատեց։

Վայ թէ պարտատէրերիս մէկին այստեղ պատահեմ,  
ո՞նց ազատուեմ նրա ձեռից. կամ վմյ թէ ջաղացպանը գնչիս  
մտիկ չանի, ալիւր չտայ, ի՞նչ երեսով կնկանս երևամ։

Այս մտածմունքի վրայ նրա ոտները ծանրացաւ։ Էլ  
սիրտը չտուեց առաջ գնալ, քաշուեց ջաղացի առուի ափը,  
մեծ ընկուզի ծառի տակը տխուր նստեց. հոգսերից տարուբեր-  
ուում էին սիրտն ու գլուխը. մաշ ընկած գտակը վերցրեց,  
կողքի քարին դրեց, ձեռով ճակատը շփելով կանչեց։

— Ո՞ւր ես, այ անճար մարդի Աստուած, քեզ հրտեղ  
գտնեմ, որ թեժ ցաւերս միասոմի պատմեմ։ Ափսոս չի՞ այս  
սիրուն աշխարհը, որ խարեքաների ու յափշտակողների ձեռին  
ես թողել։ Մինչև Երբ ես ու ինձպէսները այս դժոխքում  
անմիտիթար խաշուենք։ Բա մի անգամ երեսդ մեղ ցոյց չես  
տալու, այ արդարասէրի Աստուած։ Այսպէս ինքն իրան խօսե-  
լով, վշտերը քամուն տալով Պետին թինկն էր տուել քարին  
ու գդակը գլխատակ դրած մտածում։ Մէկ էլ յանկարծ տեսաւ  
յոգնած աչքերը փակուած, քնի սիրուն աշխարհն ընկած։ ԱՇ,  
ի՞նչքան քաղցր թուաց այս անգամ նրան քնի աշխարհը.  
պարտատէրերից երկիւղ չունէր, սկսեցին համարձակ դէս ու

դէն նայել, ամեն տեղ սարք ու կարք, արդարութիւն, գեղեցկութիւն։ Արդարասէր Պետին լուռ չհամբերեց, սրտախորով գոչեց.

—Երմանի, հազար երանի այստեղ ապրողներին. փառք, անվիրջ փառք այստեղի Աստծուն։

Այս խօսքերը անցնող մարդը լսեց. Պետու վրայ գթաշարժուելով ասեց։

—Միամիտ կաց, մյ հողեղին, թէ հառաչանքդ անկեղծ է, մեր աստուածը քեզ կողորմի. Դնա առաջ ահա, ժողովրդի մէջ Արդարադատը ման է գալիս. մօտեցիր համարձակ քու կարիքն ասա:

—Երկինքը քեզ օրհնի. կարեկից մարդ. ես հէնց նրան էի փնտում: Ասեց Պետին ու առանց մի րոպէ կանգնելու վաղեց ժողովրդի խոնուած կողմը, բազմութեան մէջ նկատեց մի փառահեղ ծերունի, մատը բարձր բռնած խօսում խրատում էր. Դաակը վերցրած, երկիւղած սրտով առաջը չոքեց ու բերանը աղատով բաց արեց.

—Քու ողորմութեանը մեռնեմ, Արդարադատ Աստուած. քու կարօտ քաշելէն հոգիս թռել է, ձեռ մեկնիր անճար Պետու. ցաւերս սարերից ծանրացել են. էլ կարում չեմ տանել: Քու ստեղծածն եմ. լաւ գիտես թէ ի՞նչ մաքուր սիրտ ունիմ, մեր գիւղի զօրեղներն ու հարուստները կեանքս խաւարացրել են, զաւակներիս չոր հացի կարօտ թռելի. Ա՛րի, ինձ օրհնիր. քու խօսքով պարտքերից թափուեմ, հոգսերից աղատուեմ, որ ետոյ սրտիս փափագները կատարելով հարևանին, հասարակութեան պէտք գամ:

Աստուած փառահեղ դէմքը Պետու կողմը դարձրեց ու խօսեց.

—Քու արդարասիրութիւնը ինձ վաղուց է յայտնի, Պետի, վերկաց, մի՛ արտասուիլ. այսօրից վերջացան քու նեղութիւնները: Արի ողորմած ձեռս զլիխիդ դնեմ. իմ հովանու տակ կունենաս այն ամենը. ինչ որ սրտով փափագում ես:

Պետին երկրպագելով Աստծուն վերկացաւ ու հանգստացած սրտով ճանապարհ ընկաւ դէպ իւր տուն:

Դեռ կիսաճամբի Պետին նկատեց, որ իւր վիճակի մէջ փոփոխութիւն է առաջ գալիս: Հին հագուստը չկար. նրա տեղ նորը շխշխում, պլպլում էր. ցնծադին ձեռը գրպանը տարաւ, մատները արծաթի ոսկու փողերի զիպան ու զնզնզացին: —Ա՛յ քեզ բաղդ, բացականչեց Պետին և ուրախ տրամադրութեան մէջ լուռ հասաւ տան շէմքը, որ կնկանը զարմացնի թէ երկու խան ալիւրի փոխարէն ինչքան ոսկիներ է

բերում. ինքը մնաց զարմացած. երբ տան սրահում տեսաւ ջուաներ ալիւրով լիք երար վրայ դարսած. Աստծու օրհնութիւնը եղային էլ հասել էր, նոր հագուստներով զարդարուած սպասում էր. ընկաւ մարդու վզով ու թեր բռնած առաջնորդեց այն սենեակը, ուր զաւակները ուրախ խաղում էին; Ով էր տեսել Պետու տանը ծառայ, բայց հիմա երկու երեքը կռները վեր բաշած իրանց տիրոջ հրամանին էին սպասում:

Գիւղի մեծ ու փոքր արժացել էին Պետու բաղդի փոփոխութեան վրայ. աւելի շատ նրա պարտատէրեց, որ այժմ ամաչում էին թէ վրէն նայեն: Պետին ամենին կանչեց, իրանց հաշիւը վճարեց ու այսպէս յանդիմանեց.

— Խորհուրդ եմ տալիս, այսօրուանից թողէք ձեր վաշխառութիւնը. վայ ձեր օրին, եթէ դարձեալ մէկ չքաւորի զրնել էր. ձեր տեսած ժամանակը գնաց, էլ կոպիտ ուժի բան չկայ. այժմ արդարութիւնը և հալալ քրտինքը պէտք է իշխէ և իրաւունք բանացնէ ամեն տեղ: Ով, ուզում է ինձանից բարի լոյս լիի, թող խոնով կառավարուի:

Ամենն էլ խոր գլուխ տուին Պետուն, որովհետեւ գիւղի ամենահարուստն էր. Շառաները եկան դաշտերի բերքերի մասին կարգադրութիւն լսելու Հրամայեց նոր ամբարներ շինել տալ, որ հացահատիկները ժողովի, ձմեռը չքաւորներին բաժանելու համար: Այդպէս էլ արեց բարեգութ Պետին. ուստի անունը տարածուեց շուտով իւր գիւղից էլ շատ հեռու:

Նրա զուռը մէկ էր, եկողը քսան. ամենն էլ լիառատ ստանում էին ուզաները ու նրա որդկերանց արկշատութիւն մաղթելով գնում:

Պետին ճարտար լեզու ունէր. ժողովի, հրաւէրքի մէջ պատուաւոր տեղը նրան էին տալիս, Հասարակութիւնը նրա սրտացաւութիւնը տեսնելով մի քանի ամսէն վրա ընտրեց գիւղի տանուտէր: Պետին փող ու մշակներ ժողովեց, կիսաքանդ ժամը շինեց. սիրունացրեց. տէրտէրներին էլ պատուիրեց, որ պարապ սարապ ման չըգան. ամեն մի կիւրակէ քարոզ խօսեն, ժողովրդի պարտքը հասկացնեն: Ետոյ պատրաստութիւն տեսաւ, ուսումնարանի շէնք կանգնացրեց, որ գիւղի երեխէքը կարգան, մարդ դառնան: Օր օրի վրայ Պետին աւելի հարուստ, աւելի անուանի դարձաւ. ով ասես գիւղում նրանից վախում պատկառում էր. բայց եղայի սիրոտ դրանով գոհ չըմնաց:

— Ա՛յ մարդ, փառահեղ ծերը, որի մասին պատմում ես, իսկական Աստուած է եղել, նրա կարճ օրհնանքով յանկարծ հարստացար ու այնքան օգուտներ տուիր քո հասարակութեան: լուսը

Մի անդամ սիրտ ես արել, ցաւերիդ դարման խնդրել. արի գնա կուշտը, արած բաներիդ հաշիւը տուր ու վերջը այնպէս բան ուզիր որ մուննաթին աժենայի:

— Այ կոմիկ. լաւ խորհուրդ է, կը գնամ, սրտիս մեծ փափագը կը յայտնեմ, տեսնեմ ինչ կասի:

Տանուտէր Պետին գնաց ծեր Աստծուն գտաւ, խոնարհ գլուխ տալով իւր արածները միառմի ասեց: Աստուած հարցրեց:

— Այժմ ուզելիքդ ինչ է, Պետի:

— Տէ՛ր. դու տեսար թէ տուած շնորհդ ինչպէս վայելուչ գործ դրի: Տանուտէրի պաշտօնում այդպէս էի. եթէ գաւառի գլխաւոր լինեմ, կուռս աւելի երկար կը լինի, զօրութիւնս աւելի շատ. կարող եմ անթիւ գիւղերի ցաւերը հոգալ:

— Ուզածդ մեծ բան չէ, Պետի, կամենում եմ որ դու լինես գաւառի գլխաւոր, գնա կառավարիր, հովանիս քեզ վրայ:

Այս օրհնանքը լսելով Պետին երկրպագեց Աստծուն ու գոհ սրտով գնաց դէպ իւր գիւղը Դեռ ճանապարհի կիսումն էր. տեսաւ առաջը անթիւ ձիաւորներ լոյս ընկան. եկան ու խոր գլուխ տուին իրբ իրանց մեծաւորի: Պետին իւր վրայ նայեց. տեսաւ հագուստը փոխուել, գաւառապետի կերպ է առել, զարմացաւ իւր բաղդաւորութեան վրայ, բայց զարմանքը իւր համագիւղացիներն էր, երբ տեսաւ մի ժամանակուայ գզիր Պետուն գաւառապետի փառքով գիւղը մտնելիս: Անիրաւ հարուստների թուքը երկիւղից կպաւ: Պետին գաւառի վաշխառումներին ժաղովեց բանտարկեց. պատուիրելով՝ ինչ որ աղքատներից խել էր, մինչև ձեր կամքով չը վերադարձնէք, չեք արձակուիր: Զիաւորներով գնաց գաւառի գիւղերը ման զալուտ Մէկը գնում էր առջնից ու յայտնում ժողովրդին. ով ասելու խոսք ունի, կարող է համարձակ մօտենալ գաւառապետին: Մարդ թէ կնիկ գալիս էին, իրանց ցաւը ասում ու օգնութիւն ստանում: Աւելի շատ պաշտպանում էր հալալ քրտինք սիրողներին. աւազակ մարդ չմնաց, ամենն էլ տուն նստած հանգիստ կառավարում էին:

Պետին գառաւ ողջ գաւառի հայրը. ամենի հոգսը քաշում էր հայրաբար: Այնպէս յարգուեց ու սիրուեց, որ հեռու փողոցի ծայրին տեսնելիս բոլորը ոտի էին կանգնում, գլուխ տալիս: Այնքան էին գովում, որ ետ պատմել չի լինի. ինչքան էլ բերած ընծաները ետ էր տալիս, բայց երախտագէտները լցնում էին նրա տունն ու դուռը: Նրա փառքին նախանձողները գոչում էին.

— Երանի Պետուն, երանի նրա արդարասէր հոգուն:

Բայց տես, որ այս փառքի ու վայելչութեան մէջ Եղսօն իւր վիճակով գոհ չէր.

—Այս մարդ, սկզբից չպէտք է համարձակուէիր աստծուն նեղութիւն տալ, իրը նրա առաջ բերան բաց արիր, այնպէս բան կըխնդրէիր, որ գլացաւանք տալն աժենար, Գաւառի պետ դառնալը հասարակ բան է, ամենայն մահկանացու կարող է այդ աստիճանը ձեռ բերել առանց քու չափ արդարասէր լինելու: Ուրիշ բան է, եթէ Աստուած քեզ մեր աշխարհի իշխան կարգէր. բոլոր գաւառապետները քո իրաւունքի տակ լինէին ու քու սիրուն ծրագիրները կատարէին, Անկասկած դրախտ կըդառնար մեր աշխարհը, որ այսպէս տառապում է եսապաշտ, կեղծաւոր թագաւորի շնորհով. դու խտրութիւն չէիր դնիլ հըպատակներիդ մէջ. լացն ու հառաջը որ այժմ գաւառներում փոքր ցեղերի բերաններից լսում են, ծիծաղ ու խնդում կըդառնար, մարդիկը եղբօր պէս կապրէին...

—Եղսօն, կանչեց գաւառապետ Պետին, հրեշտակի մտքեր են բղխում քու բերանից. իմաստուն խորհուրդներ ես տալիս ինձ: Երանի թէ ամեն մի կնիկ իւր մարդի հետ այդպէս համերաշխ գնայ, ոնց որ դու ես բարութեան ճանապարհին ինձ հետ գալիս. քու փափազը իմ փափազն է:

Այս ասեց Պետին ու մի խոմք ձիաւորներով շրջապատուած գնաց ծիր Աստծուն վիճուելու: Գտաւ փառահեղ աթոռի վրայ բազմած. առաջը չոքեց, իւր գործունէութեան համառուտ հաշիւր տուեց: Աստուած ժպտաց արդարասէր Պետու խոնարհութեան վրայ, ասեց.

—Պետի, գոհ եմ քեզանից, որ քիչ ես խօսում և արածներովդ չես պարծենում: Անթիւ գովասանըներ են հասել ինձ քու արդար վճիռների մասին, ապրես, որ հասկանում ես պաշտօնդ սրբութիւնով կատարել: Կարելի է, նոր փափագ ունես սրտումդ, ասա տեսնեմ:

—Բարերար և իմաստուն Աստուած, դու ինքդ լաւ գիտես սրտինս. Էլ ես ի՞նչ ասեմ, պատասխանեց Պետին քաշուելով:

—Ճշմարիտ է, ես գուշակում եմ փափազդ ու կատարելու եմ. հաստատ իմանալով որ այս նոր պաշտօնն էլ այնպէս անշահասէր հոգով պէտք է վարես, ինչպէս տանուտէրի ու գաւառապետի պաշտօնները: Տեսնում եմ որ պարծենալու համար չես պաշտօն իննդրում, այլ գողովրդին բաղդաւորեցնելու: Օրէնում եմ քեզ. գնա եղիր ողջ երկը իշխան և կառավարիր արդարութեամբ. իմ հովանին քեզ վրայ: Բայց տես որ երկար

մնաս այդ նախանձելի պաշտօնում և վայելես արժանապէս.

Այս խօսքի վրայ մի վայրկեան Պետին գլուխը խոնարհեց որ երկրպագի. բարձրացրեց աչքերը ու զարմացրաւ.—փառակեղ աստուածը չկար. նրա տեղ թագաւորական պալատ էր կանգնած. Պետին այդ յանկարծակի փոփոխութիւնից շշմուած գլուխը բռնել էր, որ վէր չընկնի ետոյ մտաւ դահլիճ, ուր աջ ու ձախ նազիր, վեղիր, պարատականներ խոր պատկառանքով շար ընկած նրա հրամանին էին սպասում. Պետին նստեց ոսկեզօծ գահի վրայ, զեկուցումներ լսեց, իւր կողմից հրահանգներ տուեց, ամենից խիստ հաշյաներ պահանջելով ան ու երկիւղի մէջ զցեց. Օր, շաբաթ անցնելուց վերջը ամենն էլ նկատեցին, որ այս նոր իշխանը ժողովրդի սրտիցն է ջուր խմում, նրա բարեկեցութեան համար հոգում. Մկան օրհնել ու երանի տալ թագաւոր Պետուն. Այս խօսքերը լսելով չէր փեռում, այլ միմիթարւում էր որ իւր սուրբ պարտականութիւնը կարողանում է կատարել. Միշտ այն էր մտածում, որ իւր ամեն մի հպատակը ապահով վիճակ ունենայ, -վաշխառուների ճանկից ազատ լինելով իւր օրը մթնացնի այնպէս, ինչպէս իւր ընտանիքին շահաւէտ է:

Ցայտնի չէ թէ քանի տարի տեսց, միայն որոշ ժամանակից ետ արդարասէր Պետին իւր աշխարհը այն վիճակին հասցրեց, ինչպէս իւր սիրտն էր ուղում. իւր գործունէութիւնը տօնելու համար մի օր մեծ հրաւէրը սարքեց, իւր ստորագրեալներին պատուեց, արիաջանութիւնը գովելով շքանշաններ բաժանեց:

Արդ երջանիկ օրուայ իրիկնադէմին, երբ հիւրերը ցրուել էին, թագաւոր Պետին թաւշէ բազմոցի վրայ թինկ տուած, վեր ու դեր էր անում իւր նախանձելի դրութիւնը և իրաւ ամենաերջանիկ մարդը հտմարում. Վերջը նկատելով որ այս բոլորը Աստծուց է ստացել, ուղում էր բարձրածայն փառք տայ, յանկարծ մի ինչ որ ցուրտ առարկայ դիպաւ իւր վզակոթին: Խիստ ցնցուեց իշխան Պետին ու ձեռը տարաւ ծոծրակը, որ անախորժութիւն պատճառող իրը հեռացնի և ինչ շօշափեց... ամմն... մի լզրծուն գորոտ թագաւոր և շնչին լպրծուն գորոտ, անասելի կերպով զզուեց ու այդ զզուանքից վեր թոչելով թագաւոր Պետին դառաւ նորից անճար Պետի, այսինքն բաղցը քնից զարթելով, աչքը բաց արեց ու իրան տեսաւ ընկուզի ծառի տակ մեկնուած: Կոկոան արարածը չբռնուեց- ոստոստելով մտաւ կրկնն ջաղացի առուն: Խոկ Պետին մինչև սրտի խորը դառնացած կանչեց.

—Ա՛խ, նզովեալ գորտ. անիրաւ մարդկանց չարութիւնը քիչ էր, որ դու էլ սողուն տեղովդ եկար բաղդիս նախանձեցիր:

Առանց աչքերը բանալու ձեռը բնաթաթախ տարաւ գըլիատակի քարը շօշափեց ու ասեց.

—Մի վայրկեան առաջ պառկած էի թանկագին բազմոցի վրայ, իսկ այժմ ցեխոտ առուի ափին. ի՞նչ եղան պալատս, փառքս ու հպատակներս. մի՞թէ դրանք սուտ բաներ էին կամ այն բոլոր վայելչութիւնը երադ էր. Ա՛խ, գարշելի գորտ, ինչն փախցրիր ձեռէս այն անուշ աշխարհը:

Գլուխը չոր բարին սեղմելով սկսեց փակ աչքերով աղերսել.

—Ողորմած Աստուած, իս իմ կամքով չթողի քո երջանիկ աշխարհը. մեղաւորը տիմար գորտն էր, որ առուի ափերը թողած եկել էր վզիս թառ եղել. Աղաչում եմ, շնորհ արա. մի քիչ էլ վայելեմ քու պարգևած իշխանութիւնը. հազիւ աշխարհը կարգն եմ գցել:

Երեք քունը կիսատ էր. կրկին մտաւ քնի երջանիկ աշխարհը: Նրա անակնկալ անյայտանալու պատճառով մեծ անհանդատութիւն էր տիրել պալատում: Հենց որ Պետին կրկին երևաց, պալատականներ, ժողովուրդ՝ ամենն էլ բարի գալուստ մաղթեցին: Պետին հոգու մէջ ցնծում էր լսած ովաննաների վրայ. թագուհի Եղան և թագաւորազն զաւակները մասնակցում էին նրա հրճուանքին:

Այս ուրախ, բաղդաւոր միջոցին Պետին յի թունդ ցաւ զգաց աջ կողքում. մօտը մարդիկ կային. ամաչեց ցաւի մասին խօսել, ձեռով շիեց որ անցկենայ. Երկու վայրկեան չանցած միւս կողքին ծակոց զգաց. կասես մի կոշտ բանով նրան խիեցին: Այս անգամի մղկացը տւելի խիստ էր. բայց փորձեց դարձեալ նկատելի չանել թէ ինքը ցաւ է զգում:

Բայց չէ, նրա ջանքերը զուր անցան ցաւեր մեղմացնելու համար. Պետին պարզ նկատեց որ իրան խիող կայ. հարուածները անողորմաբար կրկնուում էին. ծաւն ու կսկիծը խիստ էին, էլ հնար չունէր դիմանալու: Երանելի աշխարհից ուշադրութիւնը ակամայ հեռացնելով փոխուեց դրսի աշխարհը-ցափ ու հեծեծանքի հովիտը:

Վայ, նրա աչքերին. ինչ որ նա տեսաւ, գորտից էլ վատթար արարած էր: Խւր պարտատէրերից ամենաշարագոյնը, անաստուած Հանէսն էր հոգէառ հրեշտակի պէս առաջը կանգնած: Մաղձոտ դէմքով գոռուս էր.

— Խողի տղայ, խնզ, քու ետնից մանգալով, հարցնելով բեղարեցի, գիւղամէջից այս ուր ես փախել, ծառի շուաքում հանգիստ մեկնուել: Պարտապան մարդը կըքնի՛: Այնպէս խոր ես մրափել, քացիներն էլ շուա չեն զարթեցնում: Փողիս կանխիկ շահ չես տուել քսան տարուայ մէջ. մշակութիւնով էիր վճարում. այժմ այդ էլ չես ուզում, ծոյլի պէս եկել ես քնել Զէ, էլ այսուհետեւ քեզ ինայողը չեմ. վեր կաց գնանք տանուտէրի կուշտը. մինչև փողս իրան շահով չըվճարես, ձեռէս չես աղասուի՛:

Այս ասում էր վաշխառու Հանէսը ու անճար Պետու օծիքից բռնած գլուխը մէջը անողորմ վեր ջարդուա: Արուսով Պետին թագաւորութիւնից ընկած, ամօթից չգիտէր ի՞նչ անի: Աչքերը ամուր փակած, դէպի քնի երջանիկ աշխարհը ճարահատ գոռում էր.

— Փառհեղ աստուած, ինչպէս այս իրական աշխարհի դառ փորձը ցոյց է տալիս, ամենն էլ երազ են եղել՝ թէ պարտքից թափուելս, թէ տանուտէր ու գաւառապետ դառնալս, թէ պալատում թագաւորավայել ապրելս ու ողջ աշխարհին հրամաններ տալս: Ա՛խ ու վախ... վախսոու արարածը այժմ գլուխ ջարդումէ.... Ողորմած Աստուած, եթէ այնքան բաները դժբաղդաբար երազ էին, չի կարելի՛, այնպէս անես, որ այս անգութ, անիրաւ ծեծն էլ երազ դառնար... Դէ, թէ արդարադատ ես, այդպէս արա:

ՄԽԻԹԱՐԻԿ

1905 Մայիս